2021 ԹՎԱԿԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2021 թվականի փոխառությունների տարեկան ծրագրում փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը պայմանավորված է մի քանի գործոններով, մասնավորապես փոխառու միջոցների հաշվին ՀՀ 2021թ. պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորման կառուցվածքի և ծավալների փոփոխությամբ, ՀՀ 2022-2024 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագրով (ներառյալ ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թվականների ռազմավարական ծրագրով) 2021 թվականի համար կատարված մակրոտնտեսական և հարկաբյուջետային նոր կանխատեսումներով:

Ցուցանիշներ	*2021թ. (2021թ. պետբյուջե)*	*2021թ. (2022-2024թթ. ՄԺԾԾ)*
ՀՆԱ, մլրդ դրամ	6,395.3	6,880.2
Իրական աճ, %	3.2	6.0
ՀՆԱ-ի դեֆլյատոր, %	2.0	5.0
Պետական բյուջեի եկամուտներ, մլրդ դրամ	1,509.5	1,617.3
Պետական բյուջեի ծախսեր, մլրդ դրամ	1,850.9	1,936.0
Պետական բյուջեի պակասուրդ, մլրդ դրամ	(341.4)	(318.8)
Պետական բյուջեի պակասուրդ, %-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	(5.3)	(4.6)

2021 թվականին պետական բյուջեի պակասուրդի զուտ ֆինանսավորումը փոխառու միջոցների հաշվին կկազմի 552.7 մլրդ դրամ՝ ի սկզբանե ծրագրավորված 478.1 մլրդ դրամի դիմաց, մասնավորապես.

Ֆինանսավորման աղբյուրներ	*2021թ. (2021թ. պետբյուջե)*	*2021թ. (2022-2024թթ. պարտքի կառավարման ռազմավարական ծրագիր)*
Ընդամենը զուտ ֆինանսավորում	**478.1**	**552.7**
այդ թվում՝ ի հաշիվ		
պետական գանձապետական պարտատոմսերի	210.0	203.5
արտաքին վարկերի	26.1	(29.5)
արտարժութային պետական պարտատոմսերի	241.9	378.7

Պետական գանձապետական պարտատոմսերի թողարկման հիմնական սկզբունքները և 2021 թվականի տեղաբաշխման աճուրդների օրացույցը մնացել են անփոփոխ (տես՝ https://minfin.am/hy/page/togharkman_himnakan_skzbunqnery_ev_teghabashkhman_achurdneri_oracuyc/), իսկ զուտ ֆինանսավորման ծավալը նվազեցվել է 6.5 մլրդ դրամով:

Արտաքին վարկերի գծով նախատեսվում է կատարել 88.2 մլրդ դրամի (173.3 մլն ԱՄՆ դոլար) մասհանումներ: Հարկ է նշել, որ սկզբնական ծրագրի համեմատ մասհանումների ծրագիրը նվազեցվել է 135 մլն ԱՄՆ դոլարով, որից 100 մլն ԱՄՆ դոլարը պայմանավորված է 2021թ. պետական բյուջեով ծրագրավորված բյուջետային աջակցության 100 մլն ԱՄՆ դոլար ծավալով վարկի ներգրավման գործընթացի կասեցմամբ, իսկ մնացած գումարը՝ նպատակային վարկերի գծով ծրագրային ցուցանիշների ճշգրտումներով և փաստացի կատարված մասհանումներով: Կանխատեսվում է, որ արտաքին վարկերի գծով մայր գումարի մարումները կկազմեն 117.8 մլրդ դրամ՝ ի սկզբանե ծրագրավորված 126.1 մլրդ դրամի փոխարեն, որը հիմնականում պայմանավորված է հետևյալ գործոններով.

I. 2020 թվականին ու 2021 թվականի առաջին կիսամյակի ընթացքում արտաքին վարկերի գծով մասհանումների պլանի թերակատարումն ըստ առանձին վարկային ծրագրերի,
II. արտարժույթների նկատմամբ ՀՀ դրամի կանխատեսումային ու փաստացի վճարումների համար կիրառված փոխարժեքների տարբերությունները:

Կապիտալի միջազգային շուկաներում ի սկզբանե ծրագրավորված 500 մլն ԱՄՆ դոլարի փոխարեն տեղաբաշխվել է 750 մլն ԱՄՆ դոլարի արտարժութային պարտատոմսեր, որոնց գծով զուտ մուտքը կազմել է 378.7 մլրդ դրամ:

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2022-2024 թվականների ռազմավարական ծրագրով կանխատեսվում է, որ 2021 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ կառավարության պարտքը կկազմի 4,286.3 մլրդ դրամ կամ ՀՆԱ-ի 62.3 տոկոսը և ՀՆԱ-ի նկատմամբ 2020 թվականի տարեվերջի համեմատությամբ կնվազի 1.2 տոկոսային կետով: Սկզբնական ծրագրի համաձայն՝ 2021թ. տարեվերջին կառավարության պարտք / ՀՆԱ հարաբերակցությունը պետք է կազմեր 66.0% կամ 3.7 տոկոսային կետով ավելի: Տարբերության հիմնական պատճառ է անվանական ՀՆԱ-ի վերանայված ավելի բարձր աճի կանխատեսումը:

	առ 31.12.2019թ.	**առ 31.12.2020թ.**	**առ 31.12.2021թ.**
ՀՀ կառավարության պարտք, մլրդ դրամ	3,277.3	3,923.9	4,286.3
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	50.1	63.5	62.3

ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023 թվականների ռազմավարական ծրագրով ամրագրված պարտքի պորտֆելի ուղենշային ցուցանիշները 2021թ. տարեվերջի դրությամբ կկազմեն.

	Ուղենիշ	2021թ. (կանխ.)
Վերաֆինանսավորման ռիսկ		
Մինչև մարում միջին ժամկետը	**8 – 11 տարի**	8.4 տարի
Առաջիկա տարվա ընթացքում մարվող պետական գանձապետական պարտատոմսերի (ՊԳՊ) կշիռը ՊԳՊ-երի ծավալի մեջ (տարեվերջին)	**առավելագույնը 20%**	12.2%
Տոկոսադրույքի ռիսկ		
Ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	**առնվազն 80%**	82.4%
Փոխարժեքի ռիսկ		
Ներքին պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	**առնվազն 25%**	28.3%
ՀՀ դրամով ներգրավված պարտքի կշիռն ընդամենը պարտքի մեջ	**առնվազն 25%**	27.1%

2021 թվականի տարեվերջի դրությամբ ձևավորվող կառավարության պարտքի մարման ժամանակացույցը սփռված կլինի մինչև 2054 թվականը և կունենա հետևյալ տեսքը.



2021 թվականին կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույքը կկազմի 5.0%: Կառավարության պարտքի սպասարկման ծախսերը (տոկոսավճարներ) կկազմեն ՀՆԱ-ի 2.8%-ը:

	2019թ.	2020թ.	2021թ.
Կառավարության պարտքի սպասարկում (տոկոսավճար), մլրդ դրամ	157.5	164.7	194.5
%-ներով ՀՆԱ-ի նկատմամբ	2.4	2.7	2.8
Կառավարության պարտքի միջին կշռված տոկոսադրույք, %	4.8	4.3	5.0

Կառավարության պարտքը կունենա հետևյալ կառուցվածքը.

	առ 31.12.2019թ.	առ 31.12.2020թ.	առ 31.12.2021թ.
Կառուցվածքն ըստ ռեզիդենտության, մլրդ դրամ			
ներքին պարտք	737	998	1,212
արտաքին պարտք	2,540	2,926	3,074
Կառուցվածքն ըստ գործիքակազմի, մլրդ դրամ			
արտաքին վարկեր և փոխառություններ	2,066	2,438	2,250
պետական գանձապետական պարտատոմսեր	681	959	1,162
արտարժութային պետական պարտատոմսեր	527	523	869
արտաքին երաշխիքներ	4	4	4
Արժութային կառուցվածքը, մլրդ դրամ			
ՀՀ դրամով ներգրավված պարտք	681	959	1,162
արտարժույթով ներգրավված պարտք	2,596	2,965	3,124
Կառուցվածքն ըստ տոկոսադրույքի տեսակի, մլրդ դրամ			
լողացող տոկոսադրույքով	530	769	755
ֆիքսված տոկոսադրույքով	2,747	3,155	3,531